

13 APR 2011

Գ. ՔԱՆԱԿԱԾԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԱՂՋԻԿ

891.99

Բ-64

891.99

Б-64

у.р.

Գ. ԳԵՆԵՐԱԼԻՆ

ՎԵՐԶԻՆ ԱՂԶԻԿ



4617

130 JUL 2013

606

Հրատ. Գ. Հայրապետեանի. 1920. Էջմիածին

Փառքիս հիմն ես,
Թառիս սիմն ես.
Ինչ էլ լինի՝
Միայն իմն ես:

ԱՅԻ

Իմ խենթ, իմ յամառ՝ ժողովրդի պէս,
Որ դարե՛ր ի վեր կառչել է Մասսին՝—
Բոլոր դարձերից դոյել եմ ճամբէս
Եւ հոգիս նետել աչքերիդ լուսին:

ԱՅԻ

Քո անունին լինեն սրանք և՛ քո նազին.
Թառս զնգա՛ հաղարեւրանգ լո՛կ քո մասին.
Վերջին աղջիկ, զո՛հ կբերեմ, զո՛հ կբերեմ՝
Հաղար երազ, հաղար պատրանք քո մէկ մազին:

Քեզ մի քառակ զրեմ,
Կարճ ու արագ զրեմ:
Մի պուտ արիւն առնեմ—
Սրտի կրակ զրեմ:

Արձգ ու տաք զրեմ,
Սրտից անտակ՝ զրեմ:
Բոցով սրտիդ համառ
Սրտի կտակ զրեմ:

Կսկիծ ու դող ունեւ սրտիդ,
Չհրկած մի տող ունեւ սրտիդ —
Մի տող-սր Կս միայն գիտեմ,
Ինձ պէս յաղթող ունեւ սրտիդ:

Մեռնելուց յետոյ մի՛ ակնթարթով՝
Չարթնէի՛ր և տյգ չ'իմանար ո՛չ ոք:
Որ մի տեսնէի կարօտած սրտով՝
Լացողների մէջ զո՛ւ էլ կոս արդեօք:

Հեռու եւ ինձանից, սիրտդ՝ մօտ է ինձ,
Թէ մատդ փոշ մանի-մահւան բօթ է ինձ:
Եւր, ում հետ էլ լինեա-կանաչի՛ր ճամբէդ,
Քո փեշերի վռչին վարդի հոտ է ինձ:

Չըլինի՛, թէ սէրըս մի խաղ համարեա,
Ժպիտը լուս լացիս-ծիծաղ համարեա...
Սիրտս քեզ չեմ բանա, թող աչդպէս լինի,
Որ սրտիս հրդեհը մի դաղ համարեա:

Կեանքի կանչին թե՛ համ եկել,
Երկչոտ և զգժե՛լ համ եկել.
Բազդիս անյայտ կածաններում՝
Քեզ, իմ կրակ, թու՛լ համ եկել:

ԱՅԷ

Մի կարճոտ կայ իմ սրտում,
Հուր դանակով սիրտս-կէս...
Ո՞ւմ համ արդեօք կարօտում,
Կեանքս ո՞ւմ տամ-նրան, քե՛զ:

ԱՅԷ

Եթէ այնքան սէրերից, լքումներից, հիացքից
Ինձ կորզեցի՛ր ու նորից կապեցիր քո քղանցքից.—
Ուրեմն՝ ամեն բանից շատ, ամենից լաւ դժւ ես լոկ,—
Եւ այս կեանքում քեզնից զատ՝ չեմ ունեցել ես ոչ ոք:

Մատիցըս մի փո՛ւլ հանի,
Ցաւում է, զգժե՛լ հանի...
Դանակդ սրտիս ուղղես՝
Անժե՛լ ջան, քնքժե՛լ հանի:

ԱՅԷ

Հողն է ամեն սիրունի տէր,
Դժւ, իմ կանաչ գարունի տէր...
Կեանքս հինգ օր, հինգ օրն էլ սե՛ւ
Ջան, մի՛ դառնա՛ արիւնի տէր:

ԱՅԷ

Թովհանքներիդ շնո՛ղ ես անում՝
Բուրմունքներով դադ ես անում.
Սիրտս սրտանց բաց համ արե՛լ —
Թէ՛կ գիտեմ — խա՛ղ ես անում:

Երկու բանաստեղծ. սիրում ենք իրար.
Յաւերժ և անկեղծ. մէկ է մեզ համար:
Սիրում ենք միմիանց ու երգում իրար.—
Մէկ օր, թէ անանց. մէկ է մեզ համար:

ԱՊԷ

Սիրտս բարակ է, չի մարում,
Զարկը՝ արագ է, չի մարում.
Այս քնի իւր են ճրագս ածել՝
Անբոց կրակ է, չի մարում:

ԱՊԸ

Էլի հին ցանն է նորոգում,
Սիրոյ հին դաւն է նորոգում.
Հազար բերան խօսէ պիտի—
Իմ հին համբաւն է նորոգում:

Հազար տեսակ մեղք կայ սրտիս,
Հազար խոցի՝ տեղ կայ սրտիս.
Մրմուռն է, ձեռք մի՛ դարկի—
Արիւնկալած մեխ կայ սրտիս:

ԱՊԹ

Անհոգ, անլաց, իմ ընկեր,
Հոգիդ լայն-բաց, իմ ընկեր.
Հոգիդ՝ թառի սիմերին՝
Զարկի՛ր, հարբած իմ ընկեր:

ԱՊԺ

Զըրընգում է, զըրընգում—
Թառն ընկերիս գինեմոլ.
Զըրընգում է իմ հոգում՝
Լարն ընկերիս գինեմոլ:

Սիր՛տ, մի՛ տրտմի աշխարքից,
Ու մի նեւուի զուր փառքի...
Վախենում եմ քո զարկից.
Սիր՛տ իմ, այգպէս մի՛ զարկի:

Ժանգը՝ թառին է առել՝
Լարը լարին է առել...
Աշխատել եմ, աշխատել՝
Խոփս քարին է առել:

Շրթունքներդ անբառ ցաւի մի կնիք կայ,
Զապրած բոյրի՛, հրապոյր՛ի մի գաղտնիք կայ.
Երբ ծաւալում ես ժպիտներդ հոգուս վրայ՝
Ասեա հոգուդ պալատներում հարսանիք կայ:

Զի ունեւմ, ձի՛ հրեղէն,
Ասանց սանձի-հրեղէն.
Նրա վազքին անձնատուր՝
Դու էլ դարձի՛ հրեղէն:

Երգիչ, խօսքդ սուր լինի,
Զնգան գետի ջուր լինի.—
Հզօր բազկից արձակած՝
Սրացող նեւա, հուր լինի:

Աշխարհն ինչքան չա՛ր լինի,
Սիրտն ապառաժ քա՛ր լինի.—
Պոէ՛տ, հոգիդ թնձ վերից
Իմաստուն ու սմն լինի:

Դու այս օրը հատած հաշի.
Վաղւան օրը դատած հաշի.
Եթէ այսօր լիքը լինդաս՝
Ոսկի սարեր դտած հաշի:

Դո՛ւ անխուսափ բաղդի ներքոյ պիտի լինես,
Սրտիս նման սրտիդ՝ մի գո՛հ պիտի լինես.
Որ քեզ այդպէս անսանձ սիր՛տ եմ թողնում իշուշ՝
Իմ լո՛յս մանուկ, արդե՞ք դժգո՛հ պիտի լինես:

Երանի՛ ձեզ, որ պիտի գաք՝
Մեզնից պայծառ, մեզնից ժպտո՞ւն...
Մենք մեր տան մէջ օտար եղանք,
Դուք տիրաբար կգաք մեր սուն:

Սիրտ՝, մի կարգ կայ աշխարհում,
Չափի բարք կայ աշխարհում.
Ինչքան կուգես - թպրտան,
Չափած զարկ կայ աշխարհում:

Գալիքն ունի մի սարսափ՝ թեաւոր,
Այսօրն անցնում է անափ՝ թեաւոր.
Էլ չէս գտնի՝ ինչ անցաւ ու անցաւ՝
Վաղը՝, հիացո՞ւմ, հզօր թափ թեաւոր:

Սիրտս տաղնապ է ապրում,
Վաղքի մի տապ է ապրում.
Վախենում է օրն անցնի,
Անյա՛գ, շտապ է ապրում:

Արեւից—մի շող եմ երգել,
Ծովերից—մի ցօղ եմ երգել.
Կրճքիս առկին ծփող երգից
Միայն մի կարճ տող եմ երգել:

ԼԾԶ

Ինձ կախարդող հողն եմ երգում,
Սրտիդ ծնրած դողն եմ երգում.
Անուշաքանձ, թեթև սրտով—
Երգիս վերջին տողն եմ երգում:

ԼԾԶ

Իմ հրազած հարսանիքի ջահն է անուշ,
Քեզ յաւիտեան կորցընելու անն է անուշ.
Թեւատարած երազներին վերջին աղջիկ,
Կեանքից աւել ինձ քո տաճ մահն է անուշ:

Մի լար ունեմ, մի տաղ միայն,
Սրտիս վրայ մի դաղ միայն,
Որ չեմ կարող հզօր երգով
Կեանքս տալ քեզ մատաղ միայն:

ԼԾԶ

Ժամացոյցի զարկերն յանկարծ իջան սրտիս.
Սրտիդ կանչից պոկեց, հասաւ մի ձայն սրտիս.
Ջահէլութեան ծնծղաներով սիրտս երգեց—
Ասես հոգիդ հեռից նստեց մի «ջան» սրտիս:

ԼԾԶ

Ժամացոյցի զարկը սրտիս, դամ կարծեցի՝
Ցաւը՝ սրտիս համբոյրների համ կարծեցի.
Իմ թախիժով տալւած, հարբած փողոց ընկա՛յ,
Վերջին աղջիկ, հանդիպումիդ ժամ կարծեցի:

Գրիչն առայ, որ զրեմ,
Քո երգը հին-նոր գրեմ...
Սրտիս կանչերը անբառ
Կրակոտ ու խոնր զրեմ:

ԼԹԱ

Խօսքս նւազ ինձ թւաց,
Գովքիդ անսաղ ինձ թւաց—
Անապատից անսահման՝
Մի բուռ տւազ ինձ թւաց:

ԼԹԲ

Սրտիս ասի, այս ծովի՝ ափին նայենք, սպասենք,
Ալիքների փոթորկոտ ծափին նայենք, սպասենք.
Նետենք հոգի ու երգեր, և՛ մորմոքներ իր հետուն,
Կարօտի վիճ աչքերով ճամբին նայենք, սպասենք:

Ձեմ հարցընում. ինչի՞ է քո ձեռքը կարմիր,
Ցան է քեզ ցաւ, շանքդ ոտքի վերք՞ը կարմիր.
Կաթիլ-կաթիլ վերցընում ես արիւնս տաք
Ու չեմ ասում. ինչի՞դ է պէտք ներկը կարմիր:

ԼԹԲ

Քո հիմն եմ հիւսել՝ չորս տող է միայն.
Սրտիս փոթորկից մի դող է միայն...
Վաւալիդ ներկին արիւնս է սպեկում—
Ս.ս, տաք ու կարմիր մի ցօղ է միայն:

ԼԹԲ

Ինչո՞ւ ես քեզ թողի, դառնութիւնն է սրտիս,
Մենակ՝ հոգուդ դողի ծանրութիւնն է սրտիս.
Այ թեքս քո մարմնի ծանրութեանն է կարօտ,
Քնքուշ մատիդ օղի սառնութիւնն է սրտիս:


Նամակդ պատուեցի նորից գրեցի.
Ծանօթից, եղբօրից, մօրից գրեցի.
Հիւսեցի հանաքներ, առականեր, լուրեր -
Ու չեմ յիշում ինչից, որից գրեցի:

ԿՊ. 2

Հիմա դու մի դարդ ես դարձել,
Սրտիս համար սարդ ես դարձել.
Սրտէդ մի թել սրտիս նետած՝
Ծւատող մի կարթ ես դարձել:

ԿՊ. 2

Եմք, յաղթական, իմ դէմ բանակ ես խփել.
Սրտիս՝ հաղան շամփուր, դանակ ես խփել.
Մէկը գոնէ քո ձեռքովը դուրս քաշի.
Որ մնայածն ասեմ՝ հանաք ես խփել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0371226

60.620

ՅԻՍՈՒՆ, ԲՈՒՐԼԻ